# Ս. ԾՆՈՒՆԴԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ի երեկոյան, հավարտ ժամերգության, Հայոց եկեղեցիներում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում պատարագիչն էր Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը:

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնեց Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին (տես էջ 3):

Հավարտ Ս. Պատարագի Հայոց Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողություն՝ որպես Քրիստոսի Մկրտության խորհրդանիշ: Խաչի կնքահայրն էր Բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը:

Ս. Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության ու մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՅՈՒՌՈՆԱԹԱՓ ԱՂԱՎՆԻՈՎ
ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆՆ Է ՀԵՂՈՒՄ ՕՐՀՆՎՈՂ ՋՐՈՒՄ

Академия наук Армянской ССР



Ս. ԾՆՆԴՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՉԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է
ՋՐՕՐՀՆԵՔԻ ԿՆՔԱՀԱՅՐ, ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ Է ԲԱՇԽՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ